

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վահրամ Բաղդասարյանի, Հովհաննես Սահակյանի և Արմեն Ռուստամյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-1119-15.11.2016-ՊԻ-010/0) վերաբերյալ:

1. Նախագծի վերաբերյալ, որպես սկզբունքային դիտողություն, մասնավորապես հարկ է նշել, որ նախագծի 1-ին հոդվածում սահմանվում է, որ օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի իրավունքները և պարտականությունները, իսկ նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներում թվարկված են պատգամավորի իրավունքներն ու պարտականությունները:

Եթե նշված նախագծի կարգավորման առարկան միայն պատգամավորի գործունեության երաշխիքներն են (դա բխում է օրենքի վերնագրից), ապա «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին»

օրենքի նախագծում պատգամավորի իրավունքների և պարտականությունների մասին կարգավորումներ նախատեսելու անհրաժեշտությունը բացակայում է: Իրավունքներն ու պարտականությունները երաշխիքներ չեն: Երաշխիքներն այն անհրաժեշտ պայմաններն են, որոնք պետք է ապահովեն պատգամավորի արդյունավետ գործունեությունը: Դրանք սահմանվում են պատգամավորի սահմանադրական կարգավիճակից բխող իրավունքների և պարտականությունների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով: Մինչդեռ, եթե նախագիծը նպատակ ունի ամբողջապես կարգավորելու պատգամավորի իրավական կարգավիճակի հետ կապված հարցերը, ապա նախագծի վերնագիրը հարկ կլինի փոխել:

Բացի դրանից, նախագծում թվարկված իրավունքներն ու պարտականություններն արդեն իսկ ամրագրված են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում շրջանառության մեջ գտնվող «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում (այսուհետ՝ կանոնակարգ օրենք): Տարբերությունն այն է, որ կանոնակարգ օրենքում նախատեսված չեն այնպիսի իրավունքներ, ինչպիսին է, օրինակ, հարցումներով և առաջարկներով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, պաշտոնատար անձանց, հիմնարկներին և կազմակերպություններին դիմելու, իր բարձրացրած հարցերի քննարկմանը մասնակցելու, ինչպես նաև գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքով զբաղվելու և պատգամավորի այլ իրավունքները:

Այս առումով նշված նախագծի իրավակարգավորման առարկա պետք է հանդիսանան բացառապես պատգամավորի գործունեության երաշխիքները, մինչդեռ, կարգավորման առարկան ընդլայնվել է՝ ընդգրկելով պատգամավորի իրավական կարգավիճակը, որը հանդիսանում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի կարգավորման առարկա: Ուստի, այս դեպքում առաջարկում ենք ամբողջական տեսքով միատեսակ կարգավորում նախատեսել կանոնակարգ օրենքով՝ ձեռնպահ

մնալով նախագծում նույնաբովանդակ դրույթների կրկնությունից՝ հաշվի առնելով, որ, որպես պատգամավորի կարգավիճակի հիմք, նրա իրավունքներն ու պարտականությունները նպատակահարմար է ամրագրել առավել բարձր իրավական ուժ ունեցող սահմանադրական օրենքում, ինչը կապահովի այդ իրավունքների լեգիտիմության առավել բարձր աստիճան: Նշված առաջարկը բխում է նաև «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից, որոնց համաձայն, իրավական ակտերում պետք է բացառվեն իրավական նորմերի անհիմն կրկնությունները, ներքին հակասությունները:

Ընդհանրապես, պառլամենտական իրավունքում պատգամավորների գործունեության իրավական երաշխիքները բխում են պատգամավորի սահմանադրաիրավական կարգավիճակից: Խոսելով իրավական երաշխիքների մասին ընդհանրական և մասնավոր բնորոշիչներով՝ անխուսափելիորեն պետք է անդրադառնալ պատգամավորական ինունիտետի հարցերին: Թե գրականության մեջ և թե տարբեր երկրների կողմից հարցին տրված կարգավորումներից պարզ է դառնում, որ պատգամավորական ինունիտետի բաղադրիչները հիմնականում երկուսն են՝ պատգամավորական ինդեմնիթետը և ինունիտետը: Ընդ որում, ինդեմնիթետի երկու մեկնաբանություններն են՝ ա. պատգամավորի վարձատրության, փոխհատուցումների, արձակուրդի, կենսաթոշակի, օգնականի և աջակցող այլ աշխատակազմի ու նյութատեխնիկական ապահովման և բ. հրամայական մանդատով պայմանավորված իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո պատգամավորական գործունեության շրջանակներում հայտնած կարծիքի կամ քվեարկության համար չհետապնդվելու և պատասխանատվության չենթարկվելու բաղադրիչները: Պատգամավորական ինունիտետին տրված առավել նեղ մեկնաբանությունը պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդումը միայն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համաձայնությամբ հարուցելու երաշխիքն է:

Ուստի, նախագծում ամրագրելով, որ օրենքի կարգավորման առարկան պատգամավորի գործունեության իրավական երաշխիքների սահմանումն է՝ անխուսափելիորեն պետք է անդրադառնալ նաև պատգամավորական իմունիտետի և դրա մեխանիզմների կարգավորման հարցերին:

Մյուս կողմից, եթե նկատի ունենանք, որ իմունիտետի հարցերի վերաբերյալ կարգավորումներ է պարունակում նաև կանոնակարգ օրենքի նախագիծը, առաջարկում ենք պատգամավորական իմունիտետի համակարգային կարգավորումները միասնական տեսքով նախատեսել կամ նախագծում կամ կանոնակարգ օրենքի նախագծում:

2. Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում «հարցեր» բառն անհրաժեշտ է փոխարինել «հարաբերություններ» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի պահանջները:

3. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ «պատգամավորի գործունեության երաշխիքները սահմանվում են սույն օրենքով և այլ օրենքներով»: Այդ առումով անհրաժեշտ ենք համարում նշել, որ պատգամավորի գործունեության երաշխիքներն առաջին հերթին սահմանված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ: Խոսքը վերաբերում է պատգամավորի անձեռնմխելիությանը (հոդված 96), որի ընթացակարգը կարգավորվում է կանոնակարգ օրենքի նախագծով (հոդված 117): Ուստի առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Պատգամավորի գործունեության երաշխիքները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով, սույն օրենքով և այլ օրենքներով:»

4. Եզրակացության առաջին կետում նշված դիրքորոշումը վերաբերում է նաև նախագծի 4-րդ և 5-րդ հոդվածներով նախատեսված պատգամավորական էթիկայի կանոններին և պատգամավորի շահերի բախմանը: Վերջիններս չեն հանդիսանում գործունեության երաշխիքներ և «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի կարգավորման

առարկա են: Ավելին, նշված ինստիտուտներն արդեն իսկ նախատեսված են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում շրջանառության մեջ գտնվող կանոնակարգ օրենքի նախագծում (հոդված 3, 4):

5. Նախագծի 6-րդ հոդվածում նշված իրավունքներն ու նախատեսված ժամկետները պետք է համապատասխանեցվեն կանոնակարգ օրենքում նշված ժամկետների հետ:

6. Նախագծի 7-րդ հոդվածում նախատեսելով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների նիստերին պատգամավորի մասնակցության կարգավորումները, հոդվածի 3-րդ մասում նշվում է Հաշվեքննիչ պալատի նիստերին պատգամավորների մասնակցության մասին: Հաշվի առնելով, որ գործող կարգավորումը նախատեսում է Վերահսկիչ պալատի խորհրդի նիստերին պատգամավորի մասնակցությունը՝ առաջարկում ենք նոր մշակվող «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի շրջանակներում վերանայել նախագծի նշված կարգավորումը:

7. Նախագծի 10-րդ հոդվածով սահմանված է, որ «Երևան քաղաքում բնակարան չունեցող պատգամավորին կանոնակարգով նախատեսված կարգով տրվում է Երևան քաղաքում բնակարանի վարձին համարժեք փոխհատուցում»: Այս կապակցությամբ նշենք, որ ոչ «Ազգային ժողովի կանոնակարգ» գործող օրենքը և ոչ էլ նախագիծը հատուցման կարգ չեն նախատեսում: Նախագծով նախատեսված չէ նաև, թե, արդյոք, այդ կարգի սահմանումը վերապահված է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խորհրդի իրավասությանը կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին՝ որպես կանոնակարգ օրենքի նախագծի համաձայն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ֆինանսական միջոցները տնօրինողի: Բացի դրանից, հարց է առաջանում, թե արդյոք Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն նախատեսում է նախագծին համապատասխան՝ Երևան քաղաքում բնակարանի վարձին համարժեք փոխհատուցման համար անհրաժեշտ միջոցներ, քանի որ

նախագծից հետևում է, որ Երևան քաղաքում բնակարան չունեցող յուրաքանչյուր պատգամավորի համար պետք է ապահովվի ամբողջական փոխհատուցում:

8. Նախագծի 11-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է պատգամավորի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նիստերին, հանձնաժողովի նիստերին կամ խորհրդարանական լուսններին ներկայանալու անհնարինության դեպքում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին կամ հանձնաժողովի նախագահին նախապես տեղյակ պահելու պարտականությունը: Նշված հարցը չի հանդիսանում նշված նախագծի կարգավորման առարկա և արդեն իսկ կարգավորված է կանոնակարգ օրենքի նախագծում (հոդված 3):

9. Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերից առաջարկում ենք հանել «հերթական» բառը, քանի որ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում կիրառվում է «ամենամյա արձակուրդ» եզրույթը:

10. Նախագծի 13-րդ հոդվածի՝

1) 5-րդ մասում սահմանվում է պատգամավորի կարգավիճակով պայմանավորված պաշտոնների սպառիչ ցանկը: Առաջարկում ենք հստակեցնել, թե, արդյոք, նշված պաշտոնների շրջանակը, ըստ էության, չի ընդգրկում միջազգային խորհրդարանական կազմակերպություններում և միջխորհրդարանական հանձնաժողովներում պատգամավորների զբաղեցրած պաշտոնները (այս հարցը բարձրացվել է նաև կանոնակարգ օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված եզրակացությունում):

2) 10-րդ մասով սահմանվում է, որ «Ազգային ժողովի բնականոն աշխատանքն ապահովելու համար պատգամավորը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին և իր անդամակցած հանձնաժողովի նախագահին տեղյակ է պահում համատեղությամբ կատարվող գիտական, կրթական, ստեղծագործական կամ օրենքով չարգելված այլ աշխատանքի մասին»: Առաջարկում ենք հանել «կամ օրենքով չարգելված այլ» բառերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրա-

պետության Սահմանադրությամբ պատգամավորը, բացի գիտական, կրթական, ստեղծագործական աշխատանքից, վճարովի հիմունքներով այլ աշխատանք կատարելու իրավունք չունի, և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին կամ համապատասխան պատգամավորին համատեղությամբ կատարվող աշխատանքի մասին իրազեկելը կարևորվում է միայն վճարովի գործունեության նշված տեսակների մասով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

### ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

#### **«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման դեպքում**

**«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի նախագծի** ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

#### Եզրակացություն

#### **«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման**

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

- ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**.
- բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

#### **«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ), որի ընդունումը պայմանավորված է 2015թ. դեկտեմբերին ընդունված ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդվածի պահանջով, նախատեսվում է պատգամավորի գործունեությանն առնչվող մի շարք դրույթներ, որոնք ամրագրված են Ազգային ժողովի կանոնակարգում, սահմանել առանձին օրենքով:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ արձանագրվել է Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:



## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով կարգավորվում են ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի իրավունքները, պարտականությունները, նրա գործունեության իրականացման իրավական, սոցիալական և այլ երաշխիքները, և Նախագծի ընդունման և կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է **չեզոք ազդեցություն**:

### ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

**ՀԱՎԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության  
երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

**Եզրակացություն**

**«ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի  
նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման  
վերաբերյալ**

«ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ ընդունվելու կամ չընդունվելու դեպքում, ՀՀ պետական և համայնքների բյուջեների մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

Պ-1119-15.11.2016-ՊԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի (այսուհետ՝ պատգամավոր) իրավունքները, պարտականությունները, նրա գործունեության իրականացման իրավական, սոցիալական եւ այլ երաշխիքները, ինչպես նաեւ պատգամավորի գործունեության երաշխիքներին առնչվող այլ հարցեր:

2. Պատգամավորի գործունեության երաշխիքները սահմանվում են սույն օրենքով եւ այլ օրենքներով:

**Հոդված 2. Պատգամավորի իրավունքները**

1. Պատգամավորն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով՝

1) Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնել օրենքի, Ազգային ժողովի որոշման, ուղերձի, հայտարարության նախագծեր.

2) ունենալ ելույթներ, տալ հարցեր եւ անել առաջարկներ Ազգային ժողովի եւ նրա հանձնաժողովների, ենթահանձնաժողովների, աշխատանքային խմբերի նիստերում.

3) մասնակցել, տալ հարցեր եւ ելույթ ունենալ խորհրդարանական լսումներում.

4) բանավոր կամ գրավոր հարցեր ուղղել Կառավարությանը.

5) առաջադրվել Ազգային ժողովի կողմից ընտրվող կամ նշանակվող պաշտոններում.

6) ընդգրկվել Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովների, քննիչ հանձնաժողովների, ինչպես նաեւ ենթահանձնաժողովների, աշխատանքային խմբերի կազմերում.

7) ընդգրկվել միջազգային խորհրդարանական կազմակերպություններում, միջխորհրդարանական հանձնաժողովներում Ազգային ժողովի պատվիրակությունների, ինչպես նաեւ այլ պաշտոնական պատվիրակությունների կազմում.

8) իր դիմումի համաձայն՝ ընդգրկվել Ազգային ժողովի բարեկամական խմբի կազմում.

9) ծանոթանալ Ազգային ժողովին կամ հանձնաժողովներին հասցեագրված ցանկացած փաստաթղթի հետ, բացառությամբ անվանական կամ անձնական նյութերի, ինչպես նաեւ պետական եւ ծառայողական գաղտնիք կազմող այնպիսի տեղեկատվության, որին իրավասու չէ իրազեկ լինել.

10) հարցումներով եւ առաջարկներով դիմել պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններին, պաշտոնատար անձանց, հիմնարկներին եւ կազմակերպություններին, մասնակցել իր բարձրացրած հարցերի քննարկմանը.

11) հանդիպումներ ունենալ քաղաքացիների հետ, կազմակերպել ընդունելություններ.

12) իր կարգավիճակով պայմանավորված գործունեության իրականացման համար՝ հատուցելի հիմունքներով օգտվել պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության տակ գտնվող հեռախոսային եւ էլեկտրոնային կապի միջոցներից.

- 13) դուրս գալ Ազգային ժողովի խմբակցության կազմից.
- 14) զբաղվել գիտական, կրթական եւ ստեղծագործական աշխատանքով.
- 15) իրականացնել այլ իրավունքներ:

### **Հոդված 3. Պատգամավորի պարտականությունները**

1. Պատգամավորը պարտավոր է՝

- 1) մասնակցել Ազգային ժողովի նիստերին, ինչպես նաեւ իր անդամակցած հանձնաժողովի նիստերին.
- 2) ընդգրկվել մշտական հանձնաժողովի կազմում, բացառությամբ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով (այսուհետ՝ Կանոնակարգ) նախատեսված դեպքերի.
- 3) մասնակցել իր անդամակցած հանձնաժողովի կազմակերպած խորհրդարանական լսումներին.
- 4) պահպանել պատգամավորական էթիկայի կանոնները.
- 5) պահպանել Ազգային ժողովի նստավայրի տարածքում եւ շենքում գործող անվտանգության կանոնները.
- 6) սույն օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում հանդես գալ շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ.
- 8) կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

### **Հոդված 4. Պատգամավորական էթիկայի կանոնները**

Սույն հոդվածի պահանջները վերաբերում են ինչպես պատգամավորի լիազորությունների իրականացմանը, այնպես էլ նրա ամենօրյա վարքագծին:

2. Պատգամավորական էթիկայի կանոններն են՝

- 1) հարգել օրենքը եւ ենթարկվել օրենքին.
- 2) հարգել հանրության բարոյական նորմերը.
- 3) պահպանել Ազգային ժողովի, նրա հանձնաժողովների նիստերի եւ խորհրդարանական լսումների անցկացման կարգը.
- 4) իր լիազորություններն իրականացնելիս չառաջնորդվել իր կամ իր հետ փոխկապակցված անձանց անձնական շահերով.
- 5) չօգտագործել պատգամավորի պաշտոնի հեղինակությունը ի շահ իրեն կամ այլ անձի.
- 6) իր գործունեությամբ նպաստել Ազգային ժողովի նկատմամբ վստահության եւ հարգանքի ձեւավորմանը.
- 7) ամենուր եւ ցանկացած գործունեությամբ զբաղվելիս դրսեւորել պատգամավորին վայել վարքագիծ.
- 8) հարգալից վերաբերմունք ցուցաբերել քաղաքական ընդդիմախոսների, Ազգային ժողովում հարցերի քննարկման մասնակիցների, ինչպես նաեւ բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ պատգամավորը շփվում է իր լիազորություններն իրականացնելիս:

### **Հոդված 5. Պատգամավորի շահերի բախումը**

1. Պատգամավորի կողմից իր կամ իրեն փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելը նշանակում է օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալը, Ազգային ժողովի որոշման, հայտարարության կամ ուղերձի նախագիծ ներկայացնելը, Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված հարցի վերաբերյալ առաջարկ ներկայացնելը, ինչպես նաև Ազգային ժողովի կամ նրա հանձնաժողովի նիստում ելույթ ունենալը, հարցեր տալը կամ քվեարկությանը մասնակցելը, որը թեև ինքնին օրինական է, սակայն պատգամավորը տեղյակ է կամ պարտավոր էր տեղյակ լինել, որ այն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել նաև՝

1) իր կամ իր հետ փոխկապակցված անձի գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

2) իր կամ իր հետ փոխկապակցված անձի անդամակցած ոչ առեստրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

3) իր կամ իր հետ փոխկապակցված անձի մասնակցությամբ առեստրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

4) իր հետ փոխկապակցված անձին պաշտոնում նշանակմանը.

5) պաշտոնում իր ընտրությանը կամ նշանակմանը, բացառությամբ սույն օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասում նշված պաշտոնների, ինչպես նաև որպես Ազգային ժողովի կողմից ընտրվող պաշտոնում թեկնածու՝ իր ելույթի:

2. Սույն օրենքի իմաստով պատգամավորի հետ փոխկապակցված անձինք են համարվում «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձինք:

3. Շահերի բախում առաջանալու դեպքում պատգամավորը պարտավոր է Ազգային ժողովի կամ իր անդամակցած հանձնաժողովի նիստում ելույթից կամ քվեարկությունից առաջ հանդես գալ շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ, իսկ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալիս, Ազգային ժողովի որոշման, հայտարարության, ուղերձի նախագիծ ներկայացնելիս, Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված հարցի վերաբերյալ առաջարկ ներկայացնելիս՝ համապատասխան փաստաթղթերի հետ ներկայացնել շահերի բախման վերաբերյալ իր գրավոր հայտարարությունը՝ նկարագրելով շահերի բնույթը:

4. Եթե պատգամավորն Ազգային ժողովի կամ իր անդամակցած հանձնաժողովի նիստում հանդես է գալիս շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ, ապա հարցի քվեարկությունից նրա բացակայությունը համարվում է հարգելի:

5. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթները մեկնաբանելիս համարվում է, որ պատգամավորը չի առաջնորդվում իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով, եթե նա հանդես է գալիս Ազգային ժողովի հանձնաժողովի կամ խմբակցության անունից, կամ տվյալ գործողությունը՝

1) վերաբերում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային ոչ առեստրային կազմակերպությունների, հիմնարկների կամ դրանց պաշտոնատար անձանց գործունեությանը.

2) ունի համընդհանուր կիրառելիություն եւ անդրադառնում է հասարակության լայն շերտերի վրա, այնպես, որ ողջամտորեն չի կարող մեկնաբանվել որպես պատգամավորի կամ նրա հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել.

3) վերաբերում է պատգամավորի վարձատրության չափին, գործունեության հետ կապված ծախսերի փոխհատուցմանը, արտոնություններին կամ գործունեության այլ երաշխիքներին:

**Հողված 6. Պատգամավորի հարցումները եւ ընդունելության իրավունքը**

1. Պատգամավորն իրավունք ունի հարցումներով եւ առաջարկներով դիմել պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններին, պաշտոնատար անձանց, հիմնարկներին եւ կազմակերպություններին, մասնակցել իր բարձրացրած հարցերի քննարկմանը:

2. Իրավասու պաշտոնատար անձինք պարտավոր են՝

1) երկշաբաթյա ժամկետում, քննարկել պատգամավորի գրավոր հարցումը կամ առաջարկը եւ գրավոր պատասխանել նրան.

2) ոչ ուշ, քան քննարկումից երեք աշխատանքային օր առաջ պատգամավորին գրավոր տեղեկացնել իր ներկայացրած հարցի քննարկման մասին:

3. Պատգամավորը հնարավորինս սեղմ ժամկետում ընդունելության իրավունք ունի Կառավարության անդամների, ինչպես նաեւ Կառավարությանը, վարչապետին եւ նախարարություններին ենթակա պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների, Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների, համայնքների ղեկավարների կամ իր գրավոր հարցմանը, առաջարկին պատասխանելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձանց մոտ:

**Հողված 7. Պատգամավորի մասնակցությունը պեղական եւ տեղական ինքնակառավարման մարմինների նիստերին**

1. Պատգամավորն օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է ներկա գտնվել պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների նիստերին:

2. Կառավարությունն Ազգային ժողովին նախապես տեղյակ է պահում Կառավարության հրապարակային նիստի անցկացման օրվա, ժամի եւ օրակարգի մասին՝ ներկայացնելով օրակարգին առնչվող փաստաթղթերը: Կառավարության նիստերի դահլիճում պատգամավորներին հատկացվում են տեղեր:

3. Հաշվեքննիչ պալատի նախագահն Ազգային ժողովի նախագահին, նրա տեղակալներին, մշտական հանձնաժողովներին եւ խմբակցություններին առնվազն երեք աշխատանքային օր առաջ տեղեկացնում է Հաշվեքննիչ պալատի նիստի անցկացման օրվա, ժամի եւ օրակարգի մասին՝ ներկայացնելով օրակարգին առնչվող փաստաթղթերը: Հաշվեքննիչ պալատի նիստերի դահլիճում պատգամավորներին հատկացվում են տեղեր:

**Հողված 8. Պարտադիր զինվորական ծառայությունից փարկեպում ստանալու իրավունքը**

1. Պատգամավորն իր լիազորությունների ժամկետում ունի տարկետում ստանալու իրավունք եւ ազատվում է զորահավաքներից ու վարժական հավաքներից:

**Հողված 9. Քաղաքացիների հետ պատգամավորի ընդունելության կազմակերպումը**

1. Տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են պատգամավորի պահանջով ամսական առնվազն մեկ օր կահավորված սենյակ կամ դահլիճ հատկացնել նրան՝ քաղաքացիների ընդունելության եւ նրանց հետ հանդիպելու համար:

**Հողված 10. Պատգամավորի բնակարանային պայմանների ապահովումը**

1. Երեւան քաղաքում բնակարան չունեցող պատգամավորին Կանոնակարգով նախատեսված կարգով տրվում է Երեւան քաղաքում բնակարանի վարձին համարժեք փոխհատուցում:

**Հողված 11. Պատգամավորի աշխատանքային գործունեությունը**

1. Պատգամավորի աշխատավայրն Ազգային ժողովի նստավայրն է:
2. Պատգամավորի հիմնական աշխատանքային ժամանակը ներառում է Ազգային ժողովի, նրա խմբակցությունների, հանձնաժողովների, աշխատանքային խմբերի նիստերի եւ խորհրդարանական լսումների անցկացման, ինչպես նաեւ պատգամավորի այլ լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ժամանակահատվածը: Պատգամավորի հիմնական աշխատանքային ժամանակը նորմավորված չէ:
3. Պատգամավորի վարձատրության չափը սահմանվում է օրենքով:
4. Ազգային ժողովի նիստերին, ինչպես նաեւ իր անդամակցած հանձնաժողովի նիստերին կամ հրավիրած խորհրդարանական լսումներին ներկայանալու անհնարինության դեպքում պատգամավորը պարտավոր է այդ մասին նախապես տեղյակ պահել Ազգային ժողովի նախագահին կամ իր անդամակցած հանձնաժողովի նախագահին:
5. Ազգային ժողովի նիստերից, ինչպես նաեւ հանձնաժողովի նիստերից կամ նրա հրավիրած խորհրդարանական լսումներից անհարգելի բացակայած օրերի համար պատգամավորին աշխատավարձ չի վճարվում: Պատգամավորների բացակայությունները հաշվառում է Ազգային ժողովի աշխատակազմը:
6. Ազգային ժողովի նախագահի կարգադրությամբ ծառայողական գործուղման մեկնող պատգամավորին գործուղման ծախսերի հատուցումը տրվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:
7. Պատգամավորի լիազորությունների ժամանակաշրջանը հաշվարկվում է որպես հանրային ծառայության ստաժ: Պատգամավորի աշխատանքային ստաժը չի ընդմիջվում, եթե նա իր լիազորությունների ավարտից հետո՝ մեկ ամսվա ընթացքում անցնում է այլ աշխատանքի:
8. Պատգամավորին իր լիազորությունների ժամկետով տրվում են պատգամավորական վկայական եւ դիվանագիտական անձնագիր եւ «Ազգային ժողովի պատգամավոր» կրծքանշան:

### **Հոդված 12. Պատգամավորի արձակուրդը**

1. Պատգամավորն ունի ամենամյա հերթական վճարովի արձակուրդի իրավունք՝ 30 աշխատանքային օր տեւողությամբ: Հիմնական արձակուրդային վճարից բացի՝ պատգամավորին վճարվում է լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ իր միջին ամսական աշխատավարձի չափով:
2. Պատգամավորն ունի աշխատանքային օրենսդրությամբ սահմանված չվճարվող արձակուրդի իրավունք:
3. Պատգամավորների ամենամյա հերթական արձակուրդը տրամադրվում է ամռանը՝ հերթական նստաշրջանի ավարտից հետո:

### **Հոդված 13. Պատգամավորական մանդատի անհամարելելիությունը**

1. Սահմանադրության 95-րդ հոդվածին համապատասխան՝ պատգամավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չչայամանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որեւէ պաշտոն՝ առեւտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական եւ ստեղծագործական աշխատանքից:
2. Պատգամավորական մանդատը ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պատգամավորը պարտավոր է՝
  - 1) դուրս գալ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումից,

- 2) ազատվել առեւտրային կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնից,
  - 3) դուրս գալ առեւտրային կազմակերպություններից կամ դրանց կանոնադրական կապիտալում իր բաժնեմասն ամբողջությամբ հանձնել հավատարմագրային կառավարման,
  - 4) հրաժարվել առեւտրային կազմակերպությունում ուրիշի գույքի հավատարմագրային կառավարումից,
  - 5) ազատվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում զբաղեցրած պաշտոններից, բացառությամբ՝ սույն հոդվածի 5-րդ մասում նշված պաշտոնների,
  - 6) ազատվել վճարովի հիմունքներով աշխատանքից, բացառությամբ՝ գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի:
3. Եթե առեւտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում պատգամավորի մասնաբաժնի հավատարմագրային կառավարման պայմանագիրը չի դադարել այդ կազմակերպության լուծարման կամ սնանկ ճանաչվելու հիմքով, ապա պատգամավորը պարտավոր է հավատարմագրային կառավարման պայմանագիրը դադարելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, դուրս գալ առեւտրային կազմակերպությունից կամ դրա կանոնադրական կապիտալում իր բաժնեմասն ամբողջությամբ հանձնել հավատարմագրային կառավարման:
4. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետի ընթացքը կասեցվում է Սահմանադրական դատարանում Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների վիճարկման մասին գործի քննության ընդունման օրվանից մինչեւ այդ գործով Սահմանադրական դատարանի վերջնական որոշման ընդունման օրը:
5. Պատգամավորի կարգավիճակով պայմանավորված պաշտոններ են՝ Ազգային ժողովի նախագահի եւ նրա տեղակալների, հանձնաժողովների նախագահների եւ նրանց տեղակալների, խմբակցությունների ղեկավարների եւ քարտուղարների, ինչպես նաեւ Ազգային ժողովի հաշվիչ հանձնախմբի ղեկավարի պաշտոնները:
6. Սույն օրենքի իմաստով ձեռնարկատիրական գործունեություն, ինչպես նաեւ գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանք է համարվում «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածով սահմանված համապատասխան գործունեությունը կամ աշխատանքը:
7. Պատգամավորին գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի համար վճարումը չի կարող գերազանցել ողջամիտ չափը, այսինքն՝ այն չափը, որին նույնպիսի գործունեության համար համանման որակներ ունեցող, բայց պատգամավոր չհամարվող անձը կարող է հավակնել:
8. Պատգամավորական լիազորությունների իրականացման հետ կապված պատգամավորի պարտականությունները գերակա են նրա կողմից իրականացվող գիտական, կրթական, ստեղծագործական աշխատանքի կամ օրենքով չարգելված այլ աշխատանքային գործունեության նկատմամբ:
9. Պատգամավորն իրավունք ունի մինչեւ վճարովի հիմունքներով գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի անցնելը դիմել Էթիկայի հանձնաժողով եւ ստանալ նրա եզրակացությունը:
10. Ազգային ժողովի բնականոն աշխատանքն ապահովելու համար պատգամավորն Ազգային ժողովի նախագահին եւ իր անդամակցած հանձնաժողովի նախագահին տեղյակ է պահում համատեղությամբ կատարվող գիտական, կրթական, ստեղծագործական կամ օրենքով չարգելված այլ աշխատանքի մասին:

**Հոդված 14. Պատգամավորի գործունեության ապահովումը**



1. Ազգային ժողովի նստավայրում պատգամավորին հատկացվում է կահավորված, տեխնիկական եւ կապի (այդ թվում՝ համակարգիչ, ինտերնետային կապ) միջոցներով հագեցված աշխատասենյակ, իսկ Ազգային ժողովի նիստերի դահլիճում՝ խոսափողով եւ անվանական էլեկտրոնային քվեարկության սարքավորումով հագեցված աշխատատեղ:

2. Պատգամավորը կարող է ունենալ երկու օգնական, որոնցից մեկն աշխատում է վճարովի, իսկ մյուսը՝ հասարակական հիմունքներով: Օգնականը պատգամավորի հանձնարարությամբ՝

1) նախապատրաստում է պատգամավորի կողմից Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվող փաստաթղթերը.

2) նախապատրաստում է պատգամավորի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ վերլուծական, տեղեկատվական եւ այլ նյութեր.

3) կազմակերպում է պատգամավորի մոտ քաղաքացիների ընդունելությունը.

4) կարող է Կանոնակարգով սահմանված կարգով ներկա գտնվել Ազգային ժողովի հանձնաժողովների հրապարակային նիստերին եւ խորհրդարանական լսումներին.

5) վարում է պատգամավորին ուղղված փաստաթղթերի գործավարությունը:

3. Պատգամավորի վճարովի հիմունքներով աշխատող օգնականը աշխատանքի է ընդունվում իր դիմումի համաձայն եւ պատգամավորի ներկայացմամբ՝ ժամկետային աշխատանքային պայմանագրով: Պատգամավորի վճարովի հիմունքներով աշխատող օգնականը կարող է ազատվել աշխատանքից աշխատանքային օրենսդրությամբ սահմանված հիմքերով եւ կարգով, ինչպես նաեւ ազատվում է աշխատանքից պատգամավորի լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքում:

4. Իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս պատգամավորի օգնականները օգտվում են պատգամավորի աշխատասենյակից, տեխնիկական եւ կապի միջոցներից:

#### **Հոդված 15. Օրենքի ուժի մեջ մտնելը**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը:

### **ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

#### **«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի ընդունման**

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի ընդունումը պայմանավորված է 2015 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 97-րդ հոդվածի պահանջի ապահովման անհրաժեշտությամբ: Հաշվի առնելով, որ ըստ նշված հոդվածի պատգամավորի գործունեության երաշխիքները սահմանվում են օրենքով, իսկ Ազգային ժողովի կանոնակարգը սահմանադրական օրենք է՝ սույն օրենսդրական նախաձեռնությամբ առաջարկվում է պատգամավորի գործունեությանն առնչվող մի շարք դրույթներ, որոնք ներկայումս ամրագրված են կանոնակարգում սահմանել առանձին օրենքով: